

Urbana, IL

1653

Guayacan -

July, 1896.

100.3

91.71-93  
1 - 56

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 109

# ՆԱՊԱՏԱԿ

Ս Լ Բ Գ Ի Ց Կ Ո Ւ Ց

Վահագանական գրքագործութեան

Թարգ. օր. Եղուն; Պուլիշանեան



Փ Ի Ֆ Լ Ի Ս  
պար. Մ. Շարամբէի Ընկ. || Տիպ. Մ. Շարաձև և Կ°.  
НИКОЛ. ալ. № 21.

1896

5610

Ըսկերութեան հրատարակութիւնները վաճառւում են Ընկերութեան գրասենեակում եւ գրավաճառ անոցներում:

## Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

P. 4.

- |    |   |               |      |
|----|---|---------------|------|
| 1  | Թաւաւամազ մեղու (սպառ.)                   | թարգմ. օր. Ն. | — 40 |
| 2  | Կարմիր լսպատեր                            | Տ.-Մարկոսեանի | — 30 |
|    | Նոյնը կազմած                              |               | — 50 |
| 3  | Մանկական երգեր, Դամառ-Քաթիպայի            |               | — 15 |
|    | Նոյնը կազմած (սպառ.)                      |               | — 25 |
| 4  | Թովմաս եղբօր տնակը  թարգմ. օր. Ն.         | — 45          |      |
|    | Նոյնը կազմած  Տ.-Մարկոսեանի               |               | — 60 |
| 5  | Մորեիս և նրա ջնջելու հեար. (սպ.) Ն. Տ.-Բ. | — 10          |      |
| 6  | Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Ա.     | — 10          |      |
| 7  | Մովմիսի Խորենացոյ Պատմութիւն. Հայոց.      | — 80          |      |
| 8  | Փոքրիկ ձեռնարկ գործնակալանականասութեան    | — 50          |      |
| 9  | Գամառ-Քաթիպայի բանաստեղծ. (սպառ.)         | — 50          |      |
| 10 | Ռօբինզոնի պատմութիւն, թարգ. Գ. Ք. Ա.      | — 60          |      |
| 11 | Ուխտաւորք, գործ Վ. Հ., աշխ. Ռ. Պատկ.      | — 75          |      |
| 12 | Գառնուկ և Լուսատանիկ. Հմիդափի, թ. Ն.      | — 25          |      |
| 13 | Սայեաթ-Նօվա, ազգային երգիչ                |               | — 5  |
| 14 | Ծննդեան պատմութիւնը                       |               | — 10 |
| 15 | Ազաթանգեղեայ պատմութիւն                   |               | — 1  |
| 16 | Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեանի           | — 50          |      |
| 17 | Վանայ սազ, Գ. Ներենցի                     |               | — 75 |
| 18 | Փնջիկ, Աղեքս. Արարատեանի                  |               | — 20 |
| 19 | Նամուս, (սպառ.) Ներվանդակէի               |               | — 1  |
| 20 | Ստեփաննոսի Տար. Ասող. Պատմ. ակեղեր.       | — 2           |      |
| 21 | Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը  Գ. Տ.-Աղեքս.    | — 1           | 50   |
|    | Նոյնը ընտակիր թղթի վերայ սանդրեանի        |               | — 50 |
| 22 | Ղեոնդ պատմագիր                            |               | — 2  |
| 23 | Սըբազան պատմութ. (սպառ.) Ա. Ք. Սա-        | — 30          |      |
| 24 | Դասագիրք կրօնի (ուսուց. համ.) հակեանի.    | 1             | 75   |
| 25 | Սոկրատէս, (սպառ.) թարգմ. օր. Թ. Ստեփոյ.   | — 10          |      |
| 26 | Պատմութիւն Հայոց, (սպառ.) Պալասանեանի     | 1             | 50   |
| 27 | Ուղեցոյց գործնական շերամապ., Կ. Մ.-Շ.     | — 40          |      |
| 28 | Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Դարգելի.       | 1             | 25   |
| 29 | Վարդ-Ռէսլին, Սալիրի, թարգմ. Ի. Յ.         | — 10          |      |
| 30 | Նալ և Դամայեանթի, Ֆ. Հմիդափի              |               | — 20 |
| 31 | Աստուած գիտէ արգալն ու մեղաւորք.          | — 7           |      |
| 32 | Հաւատարիմ Սաւիտրին, Վայլուների            |               | — 10 |

891.71-93

U-56

No 109

# ՆԱՊԱՏԱԿ

U L b q b g q n b g



卷之三



С Ф 10 10  
Տաղայի եւ Ըստ. || Տիպ. Մ. Շարադզե և Կ°.  
Նիկոլ. ալ. № 21.

1896

# ԱՅԱՀՐ

Дозволено цензурою, Тифлисъ, 30-го Марта. 1896 г.

## Ն Ա Պ Ա Ս Ա Կ

Ա.

Սարգիսն իւր անուանակոչութեան օրը  
նստած էր թէյի սեղանի մօտ, տատի կողքին:

Նա հէնց նոր էր վերադարձել պատարագից:  
Ներս մտաւ դայեակը և լայտնեց իւր  
տիրոջը, որ անտառապահ Գրիգորն եկել է:  
Հայրը դուրս եկաւ նախասենեակը: Երեխա-  
ներն երկչոտութեամբ տատի աչքերին նայե-  
ցին իմանալու համար, թէ արդեօք չէ կա-  
րելի, որ իրենք էլ դուրս վազեն:

— Թէհ, դուք էլ գնացէք ձեր զուարձա-  
խօսի մօտ, ասաց տատը:

— Տօնդ շնորհաւոր, Սարգիս, ասաց Գրի-  
գորը:

Սարգիսը գլուխ տուեց և հարցըրեց.

— Իսկ տոպրակինդ թխուածք է:

— Անտառի կարկանդակ է, Սարգիս, բերել եմ քեզ համար, պատասխանեց Գրիգորը, նայելով պարոնի գէմքին, իմանալու համար, թէ տոպլակը բանալ թէ ոչ: Ցոյց տուր, ցոյց տուր կարկանդակդ, ասաց հայրը:

Գրիգորը յետ արեց տոպլակի ծայրը, հանեց այնտեղից կողովը, զգուշութեամբ ձեռքը նրա մէջ տարաւ և... և ականջներիցը բռնած մի փոքրիկ նապաստակ դուրս հանեց:

— Տես ի՞նչ գեղեցիկն է, ասաց Գրիգորը, իր գլխից վեր բարձրացնելով և ամեն կողմը պտուտ տալով փոքրիկ կենդանուն. նայեցէք, ի՞նչ սիրունիկ նապաստակ է:

Երեխաների բերանները բաց մնաց... իսկ նապաստակը ականջներից կախ ընկած՝ ետևի թաթերով վեր ու վեր էր անում: Նրա սիրտը վախից տրոփում էր, և նա ոչինչ չէր տեսնում:

Այսօր լուսաբացին նա քնած էր բարձր խոտերի մէջ և ուրախ երազների մէջ էր:

Մէկ էլ մի ձեռք բռնում է նրան...

Խեղճը դեռ ուշքի չեկած՝ չորս կողմը մթնեց:

Նրան նստեցնում են մութ պայուսակի մէջ և ուր-որ տանում... Յանկարծ նրա ականջներից բռնում են:

Հիմա արդէն կուտեն ինձ, սարսափելով մտածում է նապաստակը, և նրա սիրտը մահուան գողն է ընկնում: Իսկ Գրիգորը շարունակ շուռ ու մուռ էր տալիս խեղճ կենդանուն երեխաների առաջ և ասում. Այս նապաստակն երեք շաբաթական կլինի... Կազամբ տուէք սորան, աւելի լաւ է հաց և գարեի ուտեցըէք. Հաց ուտեղով աւելի առողջ կլինի. ապա թէ ոչ, եթէ կանաչին կապեն՝ ձմեռը կնիհարի: Տեսէք ի՞նչպէս է ոտները խաղացնում ու վեր ու վեր անում... նայեցէք սորան, նայեցէք. մի վախենար, Սարգիս:

Երեխաները հերթով փայփայում էին նապաստակին, բայց այնքան զգուշութեամբ, որ կարծես թէ կրակ պիտի դառնար, իրանց մատները այրէր:

Ի՞նչ երկար ընչացք ունի, նկատեց Սարգիսը: Իսկ պոչը տես ի՞նչ փոքր է, աւելացրեց Գրիգորը:

Բայց և այնպէս, տատը սպասում էր նրանց, որ գնան թէլ խմեն: Հայրը հրամայեց Գրիգորին՝ նապաստակը մի առ ժամանակ ձգել պայուսակի մէջ, և խեղճ կենդանին նորից իրան խաւարի մէջ զգաց... Թէլից յետոյ երեխաներն սկսեցին կացարան շինել նապաստակի համար: Հայրը թոյլ տուեց երեխանե-

ըին՝ նապաստակը տեղաւորել ներքին յարկի դատարկ սենեակում. այս սենեակը բաւական լոյս էր, ունէր քարէ յատակ, դուռ և պատուհան:

Գրիգորի օգնութեան շնորհիւ գործն արագ առաջ էր գնում: Նրանք սենեակի յատակին աւազ փուեցին, աւազի վրայից ցախեր ածեցին և միայն լուսամտի ու դրան առաջը մի-մի փոքրիկ ճանապարհ թողին. մէկ անկիւնում մինչեւ անգամ տնկեցին գիհի թուփ և նրա տակ փուեցին վափուկ մամուռ, իսկ ցախերի տակ դըին երկու աման, մէկը ջրի ու կաթի, իսկ միւսը կերակրի համար:

Պատուհանին քաշեցին երկաթի ցանց, որ Սարգիսը գտել էր սրահումը հողի մէջ:— Այստեղ սրա համար լաւ տեղ է, Գրիգոր, ասաց Սարգիսը. սրանից աւել էլ ի՞նչ կուզի, լոյս է և հով:

Իէ՛ շուտ, Գրիգոր, նապաստակը բեր:

Բ.

Երեխաները բոլոր պատրաստութիւնը տեսնելուց յետով, գոռգոռալով սենեակից դուրս վազեցին: Նրանք վճռեցին պատուհա-

նից նայել, և ամեն մինը շտապում էր մի լաւ տեղ բանել իր համար: Սարգիսը բոլորից յետ մնաց. բայց շուտով յետ եկաւ Գրիգորը և նրան իւր գիրկն առաւ: Նապաստակի սենեակի դուռը փակ էր, պայուսակը բացուած դրած էր սենեակում հէնց դրան մօտ. բայց նապաստակը չէր երեսում... նա բոլորովին շփոթուած ընկած էր պայուսակում:

Մանքը լոել էին... Գրիգորը լսում էր, թէ ինչպէս էր բաբախում Սարգսի սիրտը: Նապաստակն երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ:

—Մէկ դուրս նայեմ այստեղից, մտածեց վերջապէս նապաստակը:

Եւ ահա կողովից երևացին նախ նրա ականջները, իսկ յետոյ կլորիկ գլուխը պլշած աչքերով: Նապաստակը սկսեց այս ու այն կողմը նայել. նա երբեմն մէկ ականջն էր բարձրացնում, երբեմն երկուսը միասին. նա ընչացքը այնպէս էր շարժում, որ մարդ ծիծաղից թուլանում էր...—Ես ազատուած եմ, մտածում էր նապաստակը և ինքն իր ասածին չէր հաւատում...

Նա այնքան ձգձգուեց, մինչեւ որ կողովը շուռ եկաւ և քիչ էր մնում տակովն անէր կենդանուն. մի ակնթարթում նապաս-

տակը թփի տակն անցաւ։ Նրա ջանը դող էր ընկել, սարսափելով շարունակ նայում էր կողվին... իսկ կողովը չէր շարժում...

— Արգեօք այս կողովը սատանութիւն չէ անում, մտածեց նապաստակը...

Նայեց—նայեց, բայց տեսաւ, որ չէ շարժում...

— Երեխ ես սրան սպանեցի... Այ, կերձը, ալսուհետև ինձ ձեռք չտաս։

Նա կամաց-կամաց վեր ցատկեց և յետեկի թաթերի վրայ կանգնեց... — Մեռած է, սպանել եմ։

Դէս թռաւ, դէն թռաւ նապաստակը, դնչովիսփեց կողովին.— չէ, չի շարժում, մեռած է որ կայ: — Ուրախացաւ մեր նապաստակը և իրան ձգեց թփի տակ... Նստեց, հանգստացաւ, ուղղեց ճմուտած մազերը և սկսեց երեսը լուանալ. լիզում էր նա իւր փոքրիկ կուրծքը, կողքերը, թաթերը։

Յետոյ նա թաթերով բռնեց մի ականջը, մօտեցրեց բերանին, լուաց, դարձաւ միւսը բռնեց... Բայց արի տես, որ Սարգսի քիթն արգէն վաղուց լցուել էր փոշիով։ Նա երկար ժամանակ համբերելուց յետոյ՝ յանկարծ փըռշտաց։ Նապաստակն այնպէս վախեցաւ, որ սկսեց խելագարի նման վեր-վեր թռչել, քիչ

էր մնում, որ առաստաղին հասնէր. թռաւ պատուհանի վրայ... հա-հա-հա, լսուեց նըրա տկանջին... Նա պտուտակի պէս ընկատ յատակի վրայ և սենեակում մի քանի անգամ արագ թռչկոտելուց յետոյ, դիպաւ սարսափելի կողովին և վերջապէս դարձեալ մտաւ թփի տակ։ Ականջները սրած՝ նա երկար ժամանակ ականջ էր դնում. բայց ձայն ու ձուն չկար, խորը լուսութիւն էր տիրում...

Արեւ սկսեց սաստիկ տաքացնել մեր նապաստակին. նա առաջի թաթիկները խաղացրեց օդի մէջ, յետոյ շտապով կուչ ածեց և կիսաբաց աչքերով անշարժ մնաց, կարծես թէ մեռաւ... Գրիգորը շշնջաց. — «Նայիր, Սարգիս, ննջում է մեծ-աչքանին... Այդ նշանակում է, որ նապաստակը քնելու է պատրաստում։

Նապաստակը նազիկ-մազիկ էր անում. նա թաւալ-թաւալ էր գալիս. վերջը նա կողքի վրայ ընկատ և ամբողջ մարմնով տարածուեց արեսում...

Գ.

Ճաշից յետոյ Սարգիսը ծածուկ մօտեցաւ նապաստակի սենեակին. դրան բացուածքից

նայեց և ուրախութեամբ տեսաւ, որ իր գերին ուտում է. նապաստակը ծամում էր հիւթալի թարմ տերել, իսկ դնչին երեսում էր կաթնի հետքը: Ուրեմն նապաստակը երբ մենակ էր մնացե՛՝ ամեն բանի համն էլ առել էր:

Այս միջոցին տատը ցած իջաւ և ասաց.

— Օհօ, ի՞նչպէս լաւ է այստեղ սրա համար, կարծես թէ ձմերային պարտէզ լինի: Նապոռ բերել տուեց, պատուհանի մօտ նստեց և յետոյ հրամայեց բերել իւր ձեռագործը:

Յանկարծ սենեակը ներս վազեց Միմին, տատի փոքրիկ չարաճնի շնիկը: Նապաստակը հէնց որ շնիկին տեսաւ՝ մի ակնթարթում նրա ականջները ցից-ցից եղան, նա այնպէս սարսափեց, որ ուզում էր՝ գետինը պատուի և իրան կուլ տայ:

— Կըկծի, կըկծի, կանչեց Սարգիսը:

Բայց Գրիգորը, որ կանգնած էր գուրսը պատուհանի տակ՝ հանգստացրեց նրան.

— Մի վախենար, Սարգիս, չի կծի. նըրանք իսկոյն կակսեն իրար հետ խաղալ: Նապաստակը յանկարծ սկսեց յետսի թաթերը գետինը քսել. նա քաշուեց անկիւնը, ականջները յետ ձգեց և սպասողական դէմք առաւ: Միմին վազեց նրա մօտ. նա իսկոյն ուզ-

դուեց ու թաթիկներով նրան խփեց: Շնիկը յետ թռաւ, վնդվնդաց ու հաջեց. երեսում էր, որ արդէն վախենում էր: Նա հիմա սկըսեց քծնել, ձգուեց փորի վրայ և պոչը խաղացնելով կամաց-կամաց առաջ գնաց. մօտեցաւ նապաստակին և զգուշութեամբ սկըսեց լիզել նրան: Նապաստակն անդադար խփում էր նրան իւր թաթերով, բայց քանի գնում էր՝ իւր հարուածները մեղմացնում էր: Յանկարծ նա ծլունդ եղաւ. թռաւ Միմիկը վրայով և պատի տակով ծանր-ծանր թռիչք-ներ էր անում ու սենեակի մէջ պտոյտներ գործում: Շնիկը ոչ մի քայլ անգամ յետ չէր մնում նապաստակից, խփում էր նրան դնչով, հոսոտում էր, լիզում էր նրան... Բայց խեղճ շնիկը հինգերորդ պտոյտն անելիս արդէն լոգնեց, նայեց նապաստակին, լոգւոց քաշեց, մօտեցաւ տատի ոտներին, կծկուեց ու անմիջապէս քնեց: — Հը, ի՞նչ է, հախիցդ եկաւ, չարաճնի, ասաց տատը: Իսկ մեր նապաստակը այդ ժամանակ թռչկուելով մօտեցաւ թփին և դարձեալ սկսեց ոտքերը գետնին զարկել, կարծես թէ զոռոզանում էր իւր յաղթութեամբը: Վերջապէս նա բոլորովին սիրտառաւ, ձգուեց և ծանր քայլերով մօտեցաւ Միմին ու հոտ քաշեց նրա դնչից:

Դ.

Գրիգորը մնաք բարով ասաց ու գնաց,  
խոստանալով ցոյց տալ, թէ ի՞նչպիսի խոտ է  
հարկաւոր նապաստակի համար:

Երեխաները վազեցին նրա յետևից:

Տատը սկսեց իր գուլպան գործել. նրա  
խելքն ու միտքը իւր գործին էր. մէկ-մէկ էլ  
նա դառնում էր նապաստակին և ասում.

«Գու քնած ես, սիրուն նապաստակիկ...  
Քնիր, քնիր, Միմին էլ է քնած: Տատն այնքան  
խօսեց ինքն իրան՝ մինչև որ ինքն էլ սկը-  
սեց ննջել... Քնի մէջ պառաւը յանկարծ ձայն  
լսեց. ուշքի եկաւ և սկսեց նորից գործել իւր  
գուլպան: Եկողները երեխայքն էին իրանց  
հօր հետ. նրանց յետևիցն էլ գալիս էր Գրի-  
գորը, գրկին մի խտիտ զանագան խոտ և մի  
քանի հատ էլ վայրենի մորենու ճիւղեր: Այդ  
ժամանակը տատը գործում էր: Միմին քնած  
էր, իսկ նապաստակը չէր երևում:

Հապա ուր է նապաստակը, հարցրեց  
հայրը: — Նա քնած է անկիւնում, պատաս-  
խանեց տատը առանց յետ նայելու: Բայց նա-  
պաստակը ոչ մի անկիւնում չէր երևում:

— Ես ուր կորաւ, հարցրեց տատը:

Սարգիսը հասկացաւ, նայեց աթոռի տակ

և իսկոյն աղաղակեց. — Ա՛յս, տատի, տատի,  
տես նապաստակը քո գլխին ի՞նչ է ըերել:  
Բոլորը շըջապատեցին պառաւին: Վախից  
խեղճ պառաւը գուլպան վայր ձգեց և անշարժ  
նստեց և միանգամայն կորցրեց իրան: Վեր-  
ջապէս նա խօսեց դողդոջուն ձայնով.

— Ի՞նչ է արել, Սարգիս, ասա շուտով,  
մի տանջեր ինձ:

— Տատի, նա ձեր ամբողջ շորը կրծոտել է:  
Պառաւը բարկացաւ:

— Ա՛յ, անպիտան, ո՛հ, ի՞նչ անմիտ կեն-  
դանի է... Կերակուրը քթի տակն ունի դրած՝ և  
շորս է կրծոտում: Սա մի այնպիսի չարու-  
թիւն է, որի համար հարկաւոր է հէնց հի-  
միկուանից պատժել սրան:

Բայց մինչ նա Գրիգորի ձեռքի ճիւղե-  
րեց մի լաւն ընտրում էր՝ առ ժամանակ մո-  
ռացուած նապաստակն իրան համար մի նոր  
զբաղմունք գտաւ. նա հանգիստ կերպով սկը-  
սեց կրծել թելի կծիկը. իսկ նրա մօտ ընկած  
էր արդէն փչացած գուլպան, որի վրայ կար-  
ծես մկրատով կտրատուած ծակոտիքներ էին  
երևում: Տատը զայրացաւ... դալար ճիպո-  
տը ձեռքին մօտեցաւ կենդանուն: Սարգի-  
սըն արդէն պատրաստում էր լաց լինելու:  
Բայց տատն էլ ոչինչ չկարողացաւ անել. նա-

մի քանի անգամ մտրակեց, բայց զուր էր աշխատանքը: Նապաստակը փոխանակ փախ-չելու՝ ճիպոտը բռնեց, խլեց նրա ձեռքից և յետ թռչելով՝ մի ակնթարթում արդէն կոտ-րատեց իւր սուր ատամներով և սկսեց ծամել, կարծես թէ ուտելիք էին առուել իրան:

**Տատը բոլորովին իրան կորցրեց:**

— Գոնէ դու օգնէիր, Գրիգոր, մըղ-կըտալով ասաց պառաւը: Գրիգորը ծոծրակը քորելով և ծիծաղելով՝ մի նոր ճիպոտ ըն-տրեց, բայց... նապաստակի բախտից Միմին զար-թեց, և ամեն բան տակն ու վրայ եղաւ. — Նապաստակը ճիպոտը բերանին սենեակում այս ու այն կողմն էր ընկնում. իսկ Միմին բոլոր ոլժով աշխատում էր ճիպոտը խլել նը-րանից:

Ո՛հ, ինչ լիմարն է, ասում էր տատը, երեխայր, այլ ևս ոտո չեմ դնիլ այստեղ:

Ե.

**Սարգիսը նկատեց, որ դայեակն էլ առա-ջին օրից չսիրեց նապաստակին:**

Ինչքան երեխաները խնդրում էլ էին՝ նա նապաստակի սենեակը չէր մտնում: Սար-

գիսը լսեց, որ պառաւը յանդիմանում էր Գրիգորին՝ նապաստակը բերելուն համար: «Ին-չո՞ւ բերիր, ինչո՞ւ բերիր»: Բայց նա պատաս-խանում էր... «Դատարկ բաներ ես ասում»: Դայեակը այդ օրը, Սարգիսն պառկեցնելու ժամանակ սկսեց լիզել նրա երեսը, յետոյ երկար ժամանակ նա խաչակնքում էր և երեսը շրջում մի կողմն ու գետնին թքում: Եւ նա բոլորովին չէր ուզում ասել, թէ ին-չո՞ւ համար էր այնպէս անում:

Միենոյն բանը նա կրկնում էր և յա-ջորդ օրերը: Սարգիսն այնքան սովորեց այս բանին, որ շատ անգամ ինքն էր յիշեցնում դայեակին. «արդեօք շուտով կսկսես ինձ լի-զել»: Երբ Սարգիսն ասում էր. «ախ, դայեա-կըս, որքան սիրում եմ նապաստակին, որով-հետեւ նա լաւն է»՝ դայեակը պատասխանում էր. «լաւը լաւ է, բայց Աստուած քեզ պա-հիք»: — «Իսկ դու նրան չես սիրում, դայեակս»: Դայեակը լուսմ էր, կամ ասում. «բաւական է, շատախօս, հանիր կօշիկներդ»:

Պէտք է ասած, որ քանի գնում էր՝ նա-պաստակը այնքան զուարձալի էր դառնում, այնքան աւելի քիչ էր քնում. երեկոները հօ էլ մի ասեր, նրա չարութիւններին վերջ չը կար. վազում էր երեխաների յետեից, ականջ-

ներն ոլորում էր և թռչկոտում... Սարգիսն ամբողջ օրերով խաղում էր նրա հետ... Նապաստակը շատ շուտով ընտելացաւ իւր անուանը. բաւական էր, որ կանչէին «նապաստակ»՝ և նա իսկոյն վազում էր: Սարգսից ոչ պակաս մտերմացաւ նապաստակի հետ նաև Միմին. այժմ արդէն ոչ թէ շունն էր նապաստակի յետևից ընկնում, այլ փոքրիկ կենդանին ինքն էր հետևում շանը ամեն մի քայլափոխում:

Նապաստակն այնպէս ընտելացաւ երեխաներին, որ երբ մենակ էր մնում իւր սենեակում՝ սաստիկ տիրում էր. կրծոտում և թաթերով ծեծում էր դռները՝ մինչև որ նրա մօտ էին մտնում:

Սարգիսը տանում էր նրան ուրիշ սենեակներ, բայց ամեն անգամ անախորժութեանց էր հանդիպում. մի քանի րոպէում նապաստակն արդէն ձանձրացնում էր բոլորին: Փոքրիկ կենդանին շարունակ կրծոտում ու կրծոտում էր բոլոր ձեռքն ընկած բաները:

Մի անգամ Սարգիսն արթնանում է և տեսնում է, որ դուրսը ձիւն է գալիս: Այդ օրը երեխաներին զբոսնելու չթողին: «Արի, նապաստակի համար էլ ձմեռը բերեմ, մտածեց Սարգիսը: Նա իւր սիրելուն տարաւ ման-

կանոց, հաւաքեց թղթերի կտորները, մանր կտրտեց և սկսեց թափել նապաստակի գըլիսին: Ինչպէս երեսում է՝ նապաստակին այս ըանը դուր էր գալիս, որովհետև նա թոյլ էր տալիս Սարգսին թափելու իւր վրայ թրդթի կտորները. յանկարծ նա վեր էր թռչում տեղիցը, որով շարժում էր Սարգսի ծիծաղը: Պայեակը վնթինթաց.—«Զկարծես թէ ես կաւելեմ սենեակը, ոնց չէ, իսկի մօտ էլ չեմ գայ. թող տիկինը գայ տեսնէ, թէ նապաստակն ինչպէս է կեղտոտել այստեղ: Այս ինչ պատիժ է, Տէր Աստուած»: Պառաւն սկսեց մէկ-մէկ համարել նապաստակի արած բոլոր չարութիւնները:—«Նայիր, ինչի՞ նման է պատը, իսկ սեղանը: Օ՛հ, ատելի արարած, իմ փոքրիկ սեղուկն էլ է կրծոտել»: Յանկարծ գայեակի միտն ընկան Սարգսի կրկնակօշիկները. «Ո՞ւր են կրկնակօշիկներդ, ուր են»: Իսկ կրկնակօշիկները Սարգիսը մոռացմամբ նապաստակի սենեակումն էր թողել:

Պայեակը գնում է այնտեղ... և ինչ է տեսնում—կրկնակօշիկներից մնացել էր միայն տակի կաշին, այն էլ գզգզուած... Պայեակը գլուխը կորցրեց, նա ամբողջ տունը ոտի կանգնեցրեց: Նա գանգատուեց հօրը, տատին. վազեց մանկանոցը, վեցրեց կրծոտած

կաշին ու այնպէս նապաստակի վրայ յարձակուեցաւ, որ խեղճ կենդանին ամբողջ մարմնով դիպաւ պատին և ջարդ ու փշուր եղաւ: Սարգիսը շտապեց նրան ցած տանել:

Նապաստակը հիւանդացաւ: — «Ել չեմ սիրի դայեակիս», շշնջում էր Սարգիսը արտասուք թափելով և գուրգուրելով իւր բարեկամին:

Կենդանին կարծես թէ հասկացաւ, որ իրան խղճում են. մի փոքր հանդարտելուց յետոյ՝ նա սկսեց իւր տաք լեզուով շտապով լիզել Սարգսի փոքրիկ ձեռները: Սարգիսն ուզում էր համբուրել նապաստակին, վերջինս սկսեց լիզել նրա թաց այտերը, բերանը... և այնպիսի եռանդով, այնպէս շտապով, որ Սարգիսը շուտով գուարթացաւ...

Դժբախտութիւնը կարծես թէ աւելի ևս մօտեցըեց նրանց: Երեխաների բախտից՝ նապաստակը հէնց միւս օրն առողջացաւ: Մինչև անգամ կրկնակօշիկների մասին բոլորն էլ մտածելն անգամ մոռացել էին. մէկ խօսքով դժբախտութիւնը կարծես թէ անցել էր: Բայց ահա մի նոր ցաւ. դայեակն սկսեց գտնգատուել, թէ «նապաստակը անսուրը կեն. դանի է. նրան տանը պահելն անկարելի է,

նա մեր դժբախտութեան պատճառ կարող է դառնալ»:

— Թէև, ի հարկէ, տիկին, այդ իմ գործը չէ, բայց ձեր կամքն է, ասում էր նա տատին:

Տատը թէև վիճում էր դայեակի հետ՝ բայց նրա միտքն էլ փոքր ինչ պղտորուեց, և ինքն իրան հանգստացնում էր միայն նրանով, որ նապաստակի սենեակում ոչ ոք չէր ապրում: Բայց այնուամենայնիւ տատը խիստ կերպով արգելեց, որ նապաստակին իրանց կեցած սենեակները չբերեն: Այս բանը Սարգսի համար մեծ վիշտ էր, նա մանաւանդ ձբմեռ ժամանակը, երբ իրան շատ հազիւ էին ժողնում ներքեւ գնալու: Թէև Սարգիսը շուտով հաշտուեց դայեակի հետ՝ բայց և այնպէս յաճախ ասում էր նորան. — ամեն բանի համար սիրում եմ քեզ, դայեակս, միայն նապաստակի համար չեմ սիրում: — Մի սիրեր, մի սիրեր, պատասխանում էր դայեակը, միայն թէ առողջ եղիր, Տէր ընդ քեզ:

Զ.

Փարնան սկզբին տատը տիսուր նամակ ստացաւ: Խեղճը մի քանի ժամ շարունակ ցաց էր լինում, յետոյ երկար ժամանակ խոր-

Հրդակցում էր իւր որդու հետ. և յետոյ նրան որդին շտապով պատրաստուեց և ճանապարհ ընկաւ մի ինչ-որ հեռու տեղ: Միւսօրն, առաւտեան թէլից յետով, Սարգիսը ըստ իւր սովորութեան վազեց նապաստակի մօտ, նրա հետ խաղալու: Բայց Սարգսին չաջողուեց բաւականաչափ խաղալ իւր սիրելու հետ.—նրան շուտով վերև կանչեցին դասերը սովորելու: Նրանից մեծերն արդէն պարապում էին. երեխայքը ցոյց տուին Սարգսին, թէ ինչ է տուած գրքից արտադրելու... Սարգիսը նստեց: Բայց գործը չէր յաջողուում, որովհետև գարնանային արևն առանձին սիրով և քաղցրութեամբ հրապուրում էր նրան:

Յանկարծ նա սենեակից անյատացաւ և շուտով կըկին վերադարձաւ, մի ինչ-որ բան ծածկելով հանդերձի տակ: Մեծ երեխաները շարունակում էին եռանդով պարապել: Այժմանակ մի ինչ-որ բան ընկաւ նրանց սեղանի վրայ: Բոլորն էլ վեր թուան իրանց տեղերից...և ինչ տեսնեն: Նապաստակը նստած էր սեղանի վրայ և կարծես մտածում էր, թէ ինչ բանից սկսի իւր չարութիւնները:

Նա թեթև կերպով քաշեց գըշածայրից, շուռ տուեց թանաքամանը և, երբ երեխաներն աղաղակեցին՝ անզգուշութեամբ սեղա-

նից վայր ընկաւ, դիպաւ երկրագնդին, վայր ձգեց և մի ակնթարթում բարձրացաւ գրքերի դարակների վրայ: Այստեղ նա արդէն բոլորովին չափը կորցրեց. գիրք, տետրակ—բոլորը շաղ տուեց:

Հէնց նոյն բովէին երեխաների մօտ եկաւ տատը, իսկ նրա յետեկից դայեակը.

—Ահա թէ առանց ինձ ինչով էք զբաղւում, ասաց տատը, շատ լաւ...

Դէ, դայեակ, առ այժմս տար սրան իւր տեղն ու թող երեխաներից ոչ մէկը չհսմարձակուի այնտեղ ոտք գնել:

Մի լաւ խփիր, է, դրան, տես թէ ինչպէս է ալդ անպիտանը կըծոտում տետրակը...

Դէ, տար շուտով, ես դրան տեսնել անգամ չեմ կարող: —Երեխաները մնացել էին սառած... տատն այլ ես ոչինչ չասաց և դուրս գնաց սենեակից: Սարգիսը չկարողացաւ համբերել վազեց մանկանոցն, ընկաւ իւր անկողնի վրբայ, երեսը թագցրեց բարձի մէջ և սկըսեց լաց լինել: Դայեակը ուզում էր նըրան միխթարել, բայց Սարգիսը յետ խփեց պառաւին և հեկեկալով բացագանչեց.—Այս բոլորի պատճառը դու ես, դու, տատս առաջ սիրում էր նապաստակիս, թողնում էր մեր

սենեակները գալու... Բայց դու... բոլորը դու  
արիր:

Դայեակը նստած էր լանցաւորի նման:  
Սարգիսն ալնքան լաց եղաւ, մինչեւ որ  
քնեց: Նա զարթեց միայն երեկոյեան գէմ  
և տեսաւ որ իւր մահճակալի մօտ նստած է  
տառը: Պառաւը ձեռքը դնելով երեխալի ճա-  
կատին՝ հարցրեց.—ցաւում է.

— Այո, երկչոտութեամբ պատասխանեց  
Սարգիսը:

— Այդ նրանից է, որ դու ինձ չես լսում,  
ասաց տառը և դուրս գնաց մանկանոցից:

Դայեակը ներս ըերեց ճաշը, բայց Սար-  
գիսը չէր ուզում ուտել: Դայեակը չստիպեց  
երեխալին, նա անձեռոցիկը բացեց, նստեց  
Սարգսի մահճակալի մօտ և կարծես թէ մի  
բանի էր սպասում: Երկար ժամանակ երկու-  
սըն էլ լուռ էին: Բայց ահա Սարգիսը յոդ-  
ւոց հանեց և հարցրեց.—Ուր է նապաստակը:

— Իւր սենեակումն է, մանկիկս... Այն-  
տեղ Միմիի հետ խաղում է:

— Իսկ դու ինչու էիր գնացել նրա մօտ:  
— Ի՞նչպէս թէ ինչու. կանաչ խոտ և  
կաթ տարայ նրա համար:

Միմիին էլ տարայ նրա մօտ, որ չըտրխ-  
րի... իսկ դու, Սարգսիկս, լաւ կը լինի, որ

մի քիչ սպաս ուտես, հաւատա, գլխացաւդ  
կանցնի:

— Տուր տեսնեմ, համաձայնուեց Սար-  
գիսը:

Նա սկսեց ճաշել, իսկ դայեակը կողքին  
նստած նրան մխիթարում էր:—Վաղը, Սար-  
գիս ջան, դասդ կողորես, Սստուծով տատիցդ  
էլ ներողութիւն կինդրես, և ապա կեր-  
թաս նապաստակիդ մօտ: Իսկ նրան սենեակ  
բերելն արգելուած է, պէտք է հնազանդել:  
Տատն առանց դրան էլ շփոթուած է... Պէտք  
է նրան հանգիստ թողնել, հոգեակս: Նա շատ  
նեղանում է սիրելիս, որ հայրիկիցդ նամակ  
չկայի...

Շուտով գիշերը վրայ հասաւ:

Երեխաները պառկեցին քնելու. դայեա-  
կը պառկեցրեց և Սարգսին: Բայց նրա քու-  
նը չէր տանում... Նա պառկած էր աչքերը  
փակ և մտածում էր, թէ տառը արդեօք վա-  
լլ իրան կներէ թէ ոչ:

Խաղաղ էր ամեն տեղ... Դայեակը ոտքի  
մատների վրայ սենեակը մտաւ և սկսեց ա-  
ղօթել...

Ցետոյ նա Սարգսին խաչակնքեց:

Երեխան բացեց աչքերը և շատ մեղմ  
ձայնով կանչեց.

— Դայեակս... կռացիր դէպի ինձ, մօտ,  
աւելի մօտ:

— Միթէ քնած չես, քաղցրիկս, ի՞նչ ես  
ուզում:

— Սիրելի դայեակս, շշնչաց Սարգիսը,  
դնա բեր ինձ մօտ. ուզում եմ հրաժեշտ  
տալ:

— Ում բերեմ... Օ՛հ, այդ ի՞նչ հնարեցիր,  
լսել անգամ չեմ ուզում: Բայց Սարգիսն ա-  
մուր կերպով կախուեց նրա պարանոցից և մի  
քանի անդամ համբուրելով ասաց:

— Գոնէ մի ըոպէ, գոնէ մի վալրկեան...

Դայեակը յորքան էլլաշխատում էր չը-  
կատարել նրա կամքը՝ բայց չեղաւ, հնա-  
գանդուեց:

— Օ՛հ, Սարգիս, ինձ համար պատիժ է  
քեզ հետ լինել. բաւական է, գոնեա դադա-  
րիր լալուց, ապա թէ ոչ աչքերդ կուռչին:

Դայեակը մեծ զգուշութեամբ ստուերի  
պէս անցաւ, մտաւ նախ տատի ննջարանը,  
այնտեղ կանգնեց, ականջ դրեց. յետոյ ներ-  
քե իշաւ սանդուխով և նապաստակը բըռ-  
նած վերադարձաւ Սարգսի սենեակը:

— Ա՛ռ, յամառ, մի լաց լինիր...

Իսկ երբ պէտք է քնիս: Օ՛հ, ատելի  
կենդանին քեզ բոլորովին կախարդել է...

Դէհ, ուրախացիր, Սարգսըկս. այս ըռ-  
պէիս փոստատնից նամակ բերին: Վաղը կու-  
րախանալ մեր սիրելի տատիկն էլ, իսկ հիմա  
ես նրան չեմ արթնացնի:

Դայեակը նամակը դրեց պահարանի վրայ  
և թեք ընկաւ: Իսկ նապաստակը նստեց ե-  
րեխալի մահճակալի վրայ. կարծես թէ նա  
հենց այդ էր սպասում. մի ըոպէում նա իւր  
համար Սարգսի կողքին սիրուն տեղաւորուեց  
և սկսեց իւր բերանը լիզել...

Սարգիսն ուրախութիւնից չէր իմանում  
ինչ անի: «Երանի թէ երեխան քնի, մտա-  
ծում էր դայեակը. իսկոյն նապաստակը կտա-  
նիմ: Բայց Սարգիսը բոլորովին չէր քնում:  
Դայեակը սպասեց—սպասեց, և քնեց մեռա-  
ծի նման:

Նուտ քուն մտաւ և Սարգիսը և այն-  
պէս էլ քնեցին նրանք մինչև առաւօտ: Մի-  
այն նապաստակն էր արթուն մնացել: Սար-  
գսի վերմակը մի քիչ կրծոտելուց յետոյ նա  
ուզեց զբունել...

Պէտք է ասել, որ լուսնեակ գիշեր էր,  
իսկ այսպիսի գիշերները նապաստակը սիրում  
էր խաղալ: Մանկանոցում դէս ու դէն ըն-  
կնելուց յետոյ՝ նա անցաւ միւս սենեակները,  
հասաւ մինչև տատի գրասենեակը... այնտեղ

նորան աւելի գուը եկաւ. նա պառկեց վաս-  
փուկ գորգի վրայ:

Ամբողջ գիշերն այնքան չարութիւններ  
արեց անպիտանը, որ միւս առաւօտը տատը  
երբ տեսաւ՝ սարսափեց մնաց...

Բայց գլխաւոր գժբախտութիւնն այն  
էր, որ երբ տատին իմաց տուին, թէ նա-  
մակ է ստացուել և դայեակը գնաց բերելու  
տեսաւ որ նամակը չկալ...

Ուր կորաւ, նապաստակը հօ չէր ուտի:  
Յետ քաշեցին պահարանը, մանկանոցի յա-  
տակի տախտակը բարձրացրին, ամբողջ տու-  
նը տակն ու վրայ արին—չկալ որ չկալ...  
Կարծես գետինն էր մտել: Ել Սարգսին ոչ  
ոք միտը չէր բերում, երեխան իրան ձգեց  
նապաստակի սենեակը: Սենեակի գուռը կը-  
րնկի վրայ բաց էր... Սարգիսը կանգ տուաւ  
դրան շեմքում, ձեռքերը միմեանց կցեց,  
ու մնաց սառած: Նապաստակը չկար...

Ամանի մէջ մի քիչ կաթն էր մնացել,  
հացի կտորտանքը թափթափած էին. կոտ-  
րատուած ու ցեխոտ ծառի ճղնիկները ընկած  
էին պատուհանի վրայ... բայց նապաստակը  
չկար:

Սարգիսը իրան կորցրած վերև բարձրա-  
ցաւ:

Ամբողջ օրը նա աչքը տնկած դայեակին  
էր նայում և վախենում էր հարցնել, թէ ուր  
է նապաստակը:

Խեղճ դայեակ. առանց գորան էլ նրա աչ-  
քերը շատ լալուց կարմրել էին, որովհետև տա-  
տից բաւական յանդիմանութիւն էր ստացել:

Սարգիսը այնուհետև չէր վստահանում  
ուրիշների հետ էլ խօսել իւր նապաստակի  
մասին: Նա գունատ և փոս ընկած աչքե-  
րով մէկ անկիւնից միւսն էր գնում և ոչ մի  
կերպ չէր կարողանում հանգստանալ:

Ե.

Երկու գիշեր շարունակ Սարգիսն երա-  
զում տեսնում էր նապաստակին, և աւելի էր  
տիրում՝ երբ որ զարթնում էր և յիշում ան-  
ցեալ օրուայ դէպքը: Երկրորդ գիշերը նա  
մինչեւ անգամ զառանցում էր: Երբ առաւօ-  
տը դայեակն սկսեց մաքրել նապաստակի սե-  
նեակը՝ Սարգիսը այլ ևս չկարողացաւ իւր  
դառն արտասուքը զսպել: Տատը նկատեց,  
որ Սարգիսը նիշարել է և հրամայեց նորան՝  
այն օրը չպարապել, այլ գնալ դայեակի հետ  
զբոսնելու:

Սենեակը հաւաքելուց լետոյ՝ դալեակը տարաւ Սարգսին այգի. այնտեղից նրանք դուրս եկան և պտտեցին ախոռի չորս կողմը և ապա մտան փոքրիկ սրահը։ Մի փոքրիկ լետ ընկած սրահ էր այս և շատ հագիւ էր պատահում, որ այստեղ մարդ մտնէր. խոտը բարձրացել և ծածկել էր այդ սրահը, որ մի կողմով կպած էր ախոռի պատին, իսկ երեք կողմից պատած էր ամուր և բարձր ցանկապատվ. ցանկապատի մօտ նոյնպէս բուսել էին խոտեր և թփեր։ Երեխալքն այս սրահն անուանում էին «գայեակի պարտէզ», որովհետեղ գայեակն երբեմնապէս մարգեր և ծաղկանոց էր շինում այնտեղ։

Երբ դուռը բաց արին ու ներս մտան... ի՞նչ տեսան. սրահի մէջ տեղը նստած էր նապաստակը։

Սարգիսը վրայ վազեց գայեակին գրկելու... Տեսնում ես, ասաց պառաւը. բայց էլի ասում ես, թէ գայեակը լաւ չէ։

Ահա և ալտերդ կարմրեցին, հոգեակս... իսկ Սարգիսը ուրախութիւնից շշնջում էր.

— Սիրելի գայեակս, ոչ ոքին մի ասեր. թող նապաստակս ամառ և ձմեռ այստեղ մնայ։

— Այդ այգպէս է Սարգսիկս, բայց ահա

թէ ցաւն ինչումն է. անպիտան Միմին եթէ հոտառութեամբ իմանայ՝ ի հարկէ կգայ այստեղ։ Իսկ երբ նրա միջոցով միւսներն էլ իմանան՝ այն ժամանակ ի՞նչ անեմ ես։ Զէ որ տատդ հրամայել էր դուրս ձգել նապաստակը։ Բայց ախար ի՞նչպէս դէն ձգեմ։ Միթէ ես չեմ տեսնում, թէ որքան սիրում ես սրան։ Մտածեցի, մտածեցի և վերջն այստեղ բերի։ — Ո՛ւ դու չար, խորամանկ շնիկ. լը սում ես, արդէն դուռը ճանկուտում է։ Դայեակը շատապեց Միմին ներս թողնել, բայց նապաստակն ու շունը դեռ նոր էին սկսել խաղալ՝ որ գայեակն ասաց. — զէհ, Սարգսիկըս, գնանք շուտով, քանի որ տանը ոչինչ էլ իմացել։

Երեկոյեան հայրը քաղաքից եկաւ տուն, ուրախ և զուարթ... Նա առաջին անգամ դիմեց տատին հետեւեալ խօսքերով. «Հանդարտուիր — բոլորը յաջող անցաւ»։ Նա սաստիկ ծիծաղում էր՝ երբ նորան պատմում էին նապաստակի արած ամեն մի չարութիւնը, և շատ ուրախացաւ, որ նամակը տատի ձեռքը չէ ընկել։

— Ես արդէն փոշմանել էի, որ այն նամակը ձեզ ուղարկեցի. նա ձեզ իզուր տեղը

սլիտի տխրեցնէր: Եւ ինչու դուրս արիք խեղճ  
նապաստակին...

— Ի՞նչ է, Սարգիս, ցաւում ես նապաս-  
տակի համար:

Սարգիսը լսելով հօր հարցը՝ մինչև ա-  
կանջները կարմրեց: Դայեակը տիկնոջը խոս-  
տովանեց իր յանցանքը և բոլոր գաղտնիքը  
բացեց...

Երեխաները վազեցին նապաստակի յետե-  
ւից և բերին տատի մօտ: Նապաստակը սկսեց  
լիզել նրա ձեռքը, կարծես ներողութիւն էր  
ինդրում: Տառը քաղցրութեամբ նայեց նա-  
պաստակին և ասաց.

— Ա՞յ դու խաբեբայ. նայիր որ այլես  
չարութիւն չանես, ապա թէ ոչ այսուհետեւ  
չեմ ների: Բայց այնուամենայնիւ թող սա  
մնայ դայեակի պարտիզում, — այնտեղ աւելի  
հանգիստ կլինի: Նապաստակն իւր նոր բնա-  
կարանում առաջուանից վատ չէր ապրում.  
բայց նա օրէցօր սկսեց աւելի և աւելի վար-  
բենանալ, մի շաբաթից յետոյ մարդկանց պա-  
տահելիս նա դէպի թփերն էր վագում: Եր-  
բեմն թագնուում էր խոտերի մէջ, այնպէս  
որ դժուարութեամբ էին նրան գտնում. մին-  
չև անգամ Միմիկցն էլ էր փախչում:

Յետոյ սկսեց տխրել. քիչ էր ուտում,  
անհանգիստ էր...

Մի անգամ Սարգիսը եկաւ պարտէզ և  
չգտաւ նապաստակին:

— Թայեակս, դայեակս, կանչեց նա, շուտ  
արի, նապաստակը կորել է:

— Բաւական է, Սարգիս, նա ուր պիտի  
գնայ:

— Գնացել է, գնացել է... Նայիր, դայ-  
եակս, ցանկապատի տակը փորուած է... Հի-  
մա ես ի՞նչ անեմ, դայեակս, Սարգիսը լալիս  
էր անմխիթար:

— Ախար հասկացիր, դայեակս, նապաս-  
տակը կկորչի. Գրիգորը հէնց այսօր նրան  
կսպանէ... Դու ոչինչ չես հասկանում, դայեակ:

— Ե՛հ, Սարգիս, ի՞նչ ես ինձ վրայ գո-  
ռում, ես ի՞նչ մեղաւոր եմ: Մի վախեր, գար-  
նանը ոչ ոք նապաստակ չէ սպանում:

— Իսկ եթէ Գրիգորը աշնանը նրան  
սպանի՞:

— Ի՞նչպէս կհամարձակի, եթէ նորան  
պատուիրեն, որ նապաստակ չսպանէ: —  
Եկ ինձ մօտ սիրելիս, աչքերդ սրբեմ: Սար-  
գիսը շարունակում էր հեկեկալ և ասում  
էր. — Ես հայրիկիցս կխնդրեմ, որ Գրիգորը  
չհամարձակի նապաստակ սպանել:

—Ահա այդ հասկանալի է, խնդրենք...  
Դեռ տես, թէ ազատութեան մէջ նա ի՞նչ-  
պէս կգիրանալ:

Այնպէս չէ դայեակս, որ իմ նապաստա-  
կին ոչ ոք չի բռնի:

—Ո՞նց կը ունեն. լիշում ես ինչպէս  
էինք պարտիզում նրա լետեկից վագելով յոդ-  
նում... Սպասիր, Սարգսիկս, ես քեզ նստեցնեմ  
ցանկապատի վրայ, ահա այսպէս... Հիմա  
ձայն տուր,—բարձր կանչիր. «Գնաս բարեաւ,  
նապաստակս. իսկ եթէ բանդ վատ գնայ՝  
յետ դարձիր»:

—«Գնաս բարեաւ, նապաստակս, աղա-  
ղակում էր Սարգսը արտասուքն աչքերին.  
Եկ, եկ...

Բայց նապաստակը չկերադարձաւ: Երկու  
օրից յետոյ երեխաները զբօսանքի ժամանակ  
Գրիգորի մօտ գնացին և պատմեցին նապաս-  
տակի փախչելը:

—Հասկացայ, ասաց պահապանը. իսկ  
ես մտածելսվ հոգեհան եղայ, թէ արդեօք  
սա ի՞նչ նապաստակ է, որ սովորել է ինձ  
մօտ գալ, կարծես կատու լինի: Գրիգորը խոս-  
տացաւ նորան ձեռք չտալ:

Ի.

Եկաւ ամպոտ աշունքը: Մեր նապաս-  
տակը սկսեց վազել դաշտումը. բայց ցեխն  
այնպէս է կպչում նրա թաթերին, որ խեղճը  
հազիւ է կտրողանում ոտները շարժել. ան-  
տառն է մտնում դարձեալ հանգստութիւն  
չէ գտնում. քամին փշում է, տերեները  
թափում են, ձայներ են լսում—սարսա-  
փում է նապաստակը: Այս բաւական չէ. նրա  
շար բախտիցը մազերն էլ թափուել են:

Ինքը ձիւնի պէս սպիտակ, իսկ հողը սե,  
ուր կարող էր ծածկուել:

Նապաստակը միմիայն ծածկում է ճա-  
հճների կոշտ ցեխերի մէջ:

Մէկ անգամ լաւ օր արեց. թէև ամպ  
էր՝ բայց անձրև չկար ու տաք օր էր: Զանձ-  
րացաւ նապաստակը կոշտ ցեխերի մէջ նստե-  
լուց և գնաց անտառը զբօսնելու: Կուշտ  
թռչոտելուց յետոյ նա նստեց հանգստանա-  
լու: Օրը հըաշալի էր. նա նստել է և լսում  
է շատ հեռուից շների հաջոցը:

Ականջները խլշեցրեց նապաստակը, բայց  
ոչ ոք չերեաց: Յանկարծ մի ինչ-որ չխկոց  
լուցեց. աղմուկ, աղաղակ բարձրացաւ ամեն

կողմից. շների հաջոցից նրա ականջները խըշ-  
խշում էին...

Նապաստակը տեսնում է, որ մի զոյգ  
նապաստակ շտապով փախչում են... Նրա  
մազերը ցից-ցից կանգնեցին, երբ նայեց նը-  
րանց վրայ. այն աստիճան վախեցած տեսաւ  
նրանց, որ համարեա նապաստակի տեսք չու-  
նէին, նրանց աչքերը դուրս թափածի նման  
էին: Նապաստակը կանչում է նրանց. բայց  
նրանք չլսեցին, թէև մօտովն անցան...

Նա էլ նրանց յետեկց ընկաւ... երբ նը-  
րանք կանգ առան մի քիչ ազատ շնչելու՝  
նապաստակը հարցրեց նրանց՝ Ի՞նչ տեսաք:

— Շներ, շներ... ձիանք, իսկ ձիանց վը-  
րայ չենք իմանում ովքեր էին: Մէկ էլ էն  
տեսանք, որ երկու աղուէս նրանց առաջին  
փախչում են ահ ու դողով: Իսկ աղուէս-  
ների ետեկց գալիս է գալլը, վախից ատամն  
ատամին չէ կարողանում դիպցնել... Նապաս-  
տակները նրանից են փախչում, բայց նա մին-  
չև անդամ էլ նրանց վրայ չնայեց. անցաւ  
նապաստակների մօտով, յետ նայեց, շունչ  
քաշեց և առաջ վազեց արագութեամբ:

Յանկարծ նայում է նապաստակը... և  
ամբողջ մարմնով դողում... Ահա երկաց մի

շան ոեխ, յետոյ միւսը, յետոյ էլի, էլի... ա-  
հագին քանակութեամբ:

Նապաստակները նետի արագութեամբ  
դուրս վազեցին անտառից. փոքր առ փոքր  
անտառը ցանցառացաւ, երկացին թփերը:  
Իսկ թփերից դուրս վազելը սարսափելի կլի-  
նի, որովհետև տարածւում էր լայն և ըն-  
դարձակ դաշտը, այնպէս որ եթէ մուկն էլ  
վազէր՝ կերկար... դրացի անտառն էլ մօտիկ  
չէ: Թշուառներն ուզեցին թագնուել թփե-  
րի մէջ. բայց մի ինչ-որ բան վախեցրեց նը-  
րանց... Եւ դուրս փախան նրանք դաշտը...  
Մէր փոքրիկ նապաստակն այնպէս էր փախ-  
չում, որ չէր հասկանում, թէ ինչ էր կատար-  
ւում նրա շուրջը: Նա չէր էլ վազում, այլ  
ոստոստում էր թուչունի պէս, առանց գետնին  
դիպչելու...

Բարակների մի ամբողջ խումբ վազում  
էր ուղղակի նրա վրայ. ահա արդէն մի շուն-  
քոլորի առաջը կտրեց... բայց անտառը հե-  
ռու չէ... Մի ըոպէ ևս՝ և նապաստակն աղա-  
տուած է...

Նա ամբողջապէս կծկուեց և որչափ ոյժ-  
ունէր՝ մի ոստիւն արաւ և մի կողմը նետուեց:

Շունը այդ չէր սպասում և շտա-

ուաշ մղուեց. իսկ միւս շները ընկան մի ու-  
թիւն վրայ:

Նապաստակը միմիալն լսում էր, թէ  
ինչպիսի ահուելի ձայներով սկսուեց կոփւը:  
Նա կարողացաւ հասնել մինչև սարի զառի-  
վայրը, այնտեղ սալթաքուեց և քարի պէս  
գլխիվայր ներքեւ գլորուեց...

«Ահա և մահս, մտածեց փոքրիկ կեն-  
դանին:

Նրա աչքերը մթնեցին և շուրջն ամեն  
բան պտտւում էր...

Նա ուշքը կորցրեց... Բայց ահա կար-  
ծես թէ մէկը հրեց նրան: Նապաստակը  
բացեց աչքերը... և որքան ուրախացաւ  
նա՝ երբ տեսաւ որ ընկած է անտառի  
մէջ, ձորում, հէնց առուակի մօտ... Ոչ հա-  
ջոց, ոչ մի աղաղակ չէ լսւում. միայն թըր-  
չուններն են, որ ուրախ-ուրախ ծլվլում են  
ծառերի վերայ:

Հա՛, նշանակում է դեռ էլի կապրենք,  
գլխի ընկաւ նապաստակը և տեղից վեր թըր-  
ուաւ՝ կարծես թէ ոչինչ չէր պատահել:

Վ Ե Ր Զ

Թիֆլիսի չԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1880 թուին

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ԱԴՐԱՄՆԵՐ ԻՍԿԱԿԱՆ,  
ՄՇՏԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ

Ի սկան անդամը վճարում է տա-  
րեկան 6 ըուբլի  
և ստանում է գրքեր 5 ըուբլու:  
Մշտական անդամը վճարում է  
միանուագ ոչ պակաս քան 100  
ըուբլի և ստանում է գրքեր տա-  
րեկան 5 ըուբլու:

Ա. շնատակից անդամը օգնում է  
Ընկերութեանը — 1) գտնելով անդամներ և 2)  
վաճառելով Ընկերութեան հրատարակութիւն-  
ները:

Օտարաքաղաքացի անդամներին Վարչու-  
թիւնը ուղարկում է գրքեր Ընկերութեան  
ծախքով:

Ընկերութեան անդամ գրւումեն՝ Ընկե-  
րութեան գրասենեակում (Барятинская улица,  
д. Гедевановой, контора Общества издания ар-  
мянскихъ книгъ) և աշխատակից անդամների  
մօտ՝ Թիֆլիսում և գաւառներում:

Ընկերութեան հրատարակութիւնները վա-  
ճառում են Թիֆլիսում:

Ընկերութեան գրասենեակում, և գրա-  
վաճառանոցներում:

Իսկ գաւառներում՝ աշխատակից անդամ-  
ների մօտ:

Գրավաճառանոցներին գեղջ 25%, ճանա-  
պարհածախսը գնողների վրայ, և 20%, ճա-  
նապարհածախսը Ընկերութեան վրայ:

Կանխիկ կամ վերադիր վճարով գնողներին  
գեղջ 30%, ճանապարհածախսը գնողների վր-  
այ:

Ուսումնարաններին, գիւղական և էժա-  
նագին գրադարաններին գեղջ 30%, ճանա-  
պարհածախսը գնողների վրայ:



- 33 Կինհարդ և Գերտըռուդ, Պեսալոցցիի . — 25  
 34 Յաւելուած ի գիրս պատմութ. Ս.սողկան. — 20  
 35 Նաւի փոքրաւորը, Մ. Ռոզենհ., թ. ի. 3. — 15  
 36 Ուռենց Յովսէվ, Ե. Սպիրի, թարգմ. ի. 3. — 15  
 37 Մեծապատիւ մուրացկանները, (սպառ.) Յ.Պ. — 40  
 38 Սպային ջոջեր, (սպառ.) Յ. Պարոնեանի 1 —  
 39 Բը-բա, Է. Օժշկօի . . . . . — 15  
 40 Շնիկ, (սպառ.) Կուլիկովայի, թ. օր. Ս.Ս. — 5  
 41 Շչեղինի երեք վրոյցներ . . . . . — 10  
 42 Տարասկոնցի Տարտարէն, Դոդէի, թ.թ.թ.Թ.Զ. — 40  
 43 Օրէանի կոյսը, Օստրոգորսկու, թ. 3. Խ. — 25  
 44 Յ. Արարատեանի կեանքը, թ. Պ. Պ. . . . — 75  
 45 Գաղափարական քահանայ, Պօտապէնկօի. — 75  
 46 Ընտանիքի յոյսը, Անենակայա, թ.օր.Մ.Տ.Յ. — 10  
 47 Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի . . . . . — 1  
 48 Քիմիա, Բուլօի, թարգմ.Ա. Մէլիք-Ալլահի. — 40  
 49 Շչեղինի երեք վէպիկ, թարգմ. Մ. Պ. . . . . — 15  
 50 Սասմայ ծռեր, Գարեգին սարկաւագի . . . . . — 50  
 51 Զաւախքի բուրմունք, Ե. Լալայեանի . . . . . — 25  
 52 Դաստիարակութիւն, թարգմ. Մ. Պ. . . . . — 1  
 53 Մըսւան, Խ. Շմիդտ, թ. Ս. Քալանթարի . . . . . — 20  
 54 Խան-Միրան, Սէլլանի . . . . . — 20  
 55 Տարաս-Բուլբա, Ն. Գոգոլի, թարգմ. Մ. Ս. — 40  
 56 Փշանքներ, Գ. սարկ. Յովսէվիեանի . . . . . — 50  
 57 Երկու քոյր, Վ. Աղա եանի . . . . . — 25  
 58 Գրախալի ընտանիք, (սպ.) գ. տ., Խըմ. Հայ. — 60  
 59 Սիրաքի Սամուէլ, (սպառ.) գ. տ., Խըմ. Հայ. — 50  
 60 Փորձանքների բժշկարան, Բրօքերի, թ. 0. — 20  
 61 Մակրեթ, Շէկապերի, թարգմ. Ս. Մալիս. — 50  
 62 Պասոնօր, Ս. Բալաղեանի և Ս. Քալանթարի. — 20  
 63 Խօլերա, բժ. Վ. Արծրունու . . . . . — 5  
 64 Խարազի աղայ, Ս. Քամալեանի . . . . . — 40  
 65 Հանրամատչ. բնախոսութ., Վ. Լունկելիիի. 1 —  
 66 Փարաւոնի աղիկը, Երէրսի, թարգմ. Գ. Շ. — 80  
 67 Խուն-Խոր, Յ. Ղաղարեանի . . . . . — 60  
 68. Ելդուջա, թարգմ. Տ. Փիրումեանի . . . . . — 45  
 69 Զորբորդ մոզը, Վան-Գէյկի . . . . . — 5  
 70 Գրախալիքնոտանիք, դ. տաւ., Խըմեան Հայրիկի, — 50  
 71 Սիրաք և Սամուէլ, դ. տաւ., Խըմեան Հայրիկի, — 50  
 72 Զոյցներ հողի մասին, Ս. Բալաղեանի . . . . . — 15

- 73 Աստղաբաշխութիւն, Ֆլամմար., թ. Տ. Յ. — 1  
 74 Մանուկների հոգածարութիւնը, Պօկրօվսկու — 20  
 75 Սուկոչի հաւկելը, Պ. Նեղվանօվի, թ. Գ. Ա. — 15  
 76 Երկու հէքեւթ, Կարմէն Սիլ'վայի, թ. Ա. Մ. — 10  
 77 Կովկասի գերին, Լ. Տօլստօյի, թ. Պ. Պ. — 20  
 78 Անձունի բաղիկը, Անդէրսէնի, թ. Պ. Ա. — 5  
 79 Վէպիկներ, Շիրվանզադէի . . . — 40  
 80 Դարվինիզմ, Ա. Բալազեանի . . . — 40  
 81 Պետրոս Դուրեան, Արշակ Զօղանեանի . — 50  
 82 Շիլիոնի կալանաւորը, Մօր. Հարտմ. թ. Կ. Գ. — 60  
 83 Համլէտ, Շէկսպիրի, թ. անդ. Յով. Խան Մ. — 75  
 84 Քննական պատմ. Հայոց, մասն Ա. Ա. Մ. — 1  
 85 Նոյն, . . . մասն Բ. { Դարա- 1 —  
 86 Նոյն, . . . մասն Գ. { գաշեա- 1 —  
 87 Նոյն, . . . մասն Գ. { նի 1 —  
 88 Պատմութ. Հայոց, բ. տպ., Ա. Պալասանեանի 1 50  
 89 Հնութիւնք Ակնայ, Յ. Ճանիկեանի . . . 2 —  
 90 Ուրբինուցի մանուկը, Ույդափ . . . — 10  
 91 Կոշկակարը երաժիշտ, Տիւաչենիլ . . . — 5  
 92 Խնձորենիների երկրում, Ույդափ . . . — 10  
 93 Երկու եղբայր, տիկ. Մօնգոմերիի . . . — 60  
 94 Մեծապ. մուրաց., գ. տպ. Յ. Պարոնեանի — 40  
 95 Նախադիտելիք բուսաբանութեան, Ա. Քիշմ. — 80  
 96 Հազարից մէկը, Ն. Մամիկոնեանի . . . — 60  
 97 Խնչպէս կուգէք, Շէկսպիրի, թ. Յ. Խան Մ. — 50  
 98 Դարվոցական առողջապահ., բժ. Վ. Արծ. — 50  
 99 Կեղեքիչ, Նեմիրովիչ-Դանչէնկօի . . . — 10  
 100 Դուռող արմաւենին, { Վ. Պարշինի, — 5  
 101 Դուռող Ագգէն, { թարգմ. Հ. Ա. — 5  
 102 Ճանապարհուրդ գորտը, . . . — 3  
 103 Մանկական լօտո, պատկերներով, . . . 1 20  
 104 Գետնափորի երեխաները, Կօրոլենկօի . — 15  
 105 Վ. Ա. Ք. Դ. Դ. Պ. Մարգարիտ գլուխացանի . . . — 5  
 106 Ակամայ մարդասպան, Կօրոլենկօի, . . . — 15  
 107 Մուգլու, Ույդափ . . . . — 10  
 108 Աներեսոյթ հոգագործ . . . . — 7  
 109 Նախասասակ, Միլիլիցկու . . . . — 7

165-

0006267

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL 0006261

